«Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոց»ՊՈԱԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի Հայոց լեզու և Գրականություն (19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։
Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,-ինքնակենսագրություն,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն(Ձև 5) ,
-Այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում։Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 08-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը ՝ 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից**:
Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 23-ին՝ ժամը 14: 00-ին,** ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոցում, հասցեն ք.Արմավիր, Սայաթ- Նովա 2/10։
Տեղեկությունների համար զանգահարել ՝ 098 74-04-54